

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱՃԱՆՐՁԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՅՐԱՆՈՒՇ ՌՈՒԴԻԿԻ

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒ ՄՆԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԹՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ

Ը.00.02 - «Տնտեսու թյան, նրա ոլորտներին տնտեսագիտության և
կառավարում» մասնագիտության մբ տնտեսագիտության
թեկնածուի գիտականաստիճանի հայցմանատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2016

Ատենախոսու թյան թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի ակադեմիայի ում

Գիտական դեկալարացիա

տնտեսագիտության դոկտոր,
դոցենտ
Հայկ Գեորգիանի Մնացականյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ**

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Տիգրան Սերյոժայի
Մարտիրոսյան

տնտեսագիտության թեկնածու
Արման Վաչագանի Պողոսյան

**Առաջատար
կազմակերպության ունի**

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությանը կայանալու է 2016թ. նոյեմբերի 10-ին ժամը 16⁰⁰-ին Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 060 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0037, ք. Երևան, Դավիթ Անհաղթ 10:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. հոկտեմբերի 10-ին:

**Մասնագիտական խորհրդի
թեկնածու,
գիտական քարտուղար՝
Մխիթարյան**

տնտեսագիտության
դոցենտ Ա.

ԱՏԵՆԱՒՈՍՈՒ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ

Յե տազոտու թյ ան թե մայ ի արդիակ անու թյ ու նը:

Տն տե ս ու թյ ան կ այ ու ն ու թյ ան ապահ ով մ ան , երկրի առջև ծ առ աց ած տար ար ն ու թյ խնդիր ն երի լ ու ծ մ ան հ արց ու մ ն շ ան ակ ալ ից դ եր ու ն ի հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ ը : Այ ս օ թ Յ այ աս տան ի Յ ան ր ապե տու թյ ու ն ու մ հ ար կ եր ը հ ան դ ի ս ան ու մ ե ն պե տակ ան ե կ ամ ու տ ն երի ձ և ավ որ մ ան կ ար ն որ ազ ու յ ն և հ ի մ ն ակ ան աղ բ յ ու ը : Ու ս տի , շ առ կ ար ն որ է հ ամ ակ ար գ ու մ իր ակ ան աց ն ե լ ն պատակ առ ո ղ ղ վ ած ք ար ե փոխ ու մ ն եր` չ խաթ ար ե լ ու հ ամ ար ե կ ամ ու տ ն երի հ ավ աք ազ ը մ ան գ որ ծ ը ն թ աց ը :

Երկր ու մ ձ և ավ որ վ ած հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ ը պե տք է ու ո ղ ղ վ ած լ ի ն ի տ վ յ ալ երկրի ի շ խա ն ու թյ ու ն ն երի կ ող մ ից որ ո շ ակ ի ժ ամ ան ակ ահ առ վ ած ու մ իր ակ ան աց վ ող տ ն տե ս ակ ան ու ս ոց ի ալ ակ ան ք աղ աք ակ ան ու թյ ան հ ի մ ն ախ ն դ ի թ ն երի լ ու ծ մ ան ը : Կ իր առ վ ող հ ար կ մ ան ե ղ ան ակ ն եր ն ու մ ե թ ող ն եր ը պե տք է առ ավ ե լ ազ ու յ ն ս հ աք վ ի առ ն ե ն տ վ յ ալ պե տու թյ ու ն ու մ տ ն տե ս ակ ան հ ար ար եր ու թյ ու ն ն երի առ կ ա մ ակ ար դ ակ ն ու տ ն տե ս ակ ան գ ար գ աց մ ան հ ի մ ն ակ ան գ եր ակ այ ու թյ ու ն ն եր ը , ի ն չ պե ս ն ան կ առ ու ց վ ած լ ի ն ե ն օ պ տի մ ալ հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ ի ն հ առ ու կ ս կ գ բ ու ն ք ն երի ու ն եր կ այ աց վ ող պ ահ ան ջ ն երի հ աք վ առ մ ան վ ը ա : Այ ս առ ու մ ով , ի ն չ պե ս տար բ եր եր կ ը ն երի հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ եր ն ե ն է ապե ս տար բ եր վ ու մ մ ի մ յ ան ց ի ց (կ ախ ս վ ած վ եր ջ ի ն երի ս գ ար գ աց մ ան ա ս տի ճ ան ի ց , պե տակ ան կ առ ավ ար մ ան հ ամ ակ ար գ ի առ ան ձ ն ահ առ կ ու թյ ու ն ն երի ց) , չ ն այ ած որ ո շ ակ ի ը ն դ հ ան ր ու թյ ու ն ն երի ն ու հ ար կ մ ան հ ամ ան մ ան մ ե խա ն ի գ մ ն երի կ իր առ մ ան ը , այ ն պե ս է լ մ ի ն ն ու յ ն պե տու թյ ան հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ ն իր ձ և ավ որ մ ան ու գ ար գ աց մ ան ամ բ ող ջ ը ն թ աց ք ու մ կ ը ու մ է բ ազ մ աթ ի վ փ ոփ ոխ ու թյ ու ն ն եր : Յ ար կ է ն շ ե լ , որ հ ար կ այ ի ն ք ար ե փ ոխ ու մ ն եր ն է ակ ան ազ դ ե ց ու թյ ու ն ե ն ու ն ե ն ու մ եր կ ը ի գ որ ծ ար ար մ ի ջ ա վ այ ը ի վ ը ա : Այ դ ազ դ ե ց ու թյ ու ն ի ց գ եր ծ չ ի մ ն ու մ ն ան եր կ ը ի տ ն տե ս ավ ար ող ս ու բ յ ե կ տ ն երի գ եր ակ շ ի ռ մ ա ս ը կ ազ մ ող փ ոք բ և մ ի ջ ի ն ձ ե ռ ն ար կ առ իր ու թյ ան (Փ Մ Ձ) ո լ որ տը : Վ եր ջ ի ն ս հ ան դ ի ս ան ու մ է եր կ ը ի տ ն տե ս ու թյ ան շ ար ժ ի չ ու ժ ը և ն պ ս ս տ ու մ է տ ն տե ս ակ ան ա ճ ի խ թ ան մ ան ը : Յ այ աս տան ի Յ ան ր ապե տու թյ ու ն ու մ Փ Մ Ձ ո լ որ տ ու մ առ կ ա ե ն բ ազ մ աթ ի վ հ ի մ ն ախ ն դ ի թ ն եր , այ դ թ վ ու մ` հ ար կ այ ի ն հ ամ ակ ար գ ի ն առ ն չ վ ող , որ ո ն ք պ ահ ան ջ ու մ ե ն լ ու ծ ու մ ն եր :

Ատե ն ախ ո ս ու թյ ու ն ը ն վ ի ը վ ած է Յ այ աս տան ի
Յ ան ր ապե տու թյ ու ն ու մ իր ակ ան աց վ ող հ ար կ այ ի ն
ք ար ե փ ոխ ու մ ն եր ի ն և դ ր ան ց ազ դ ե ց ու թյ ան ը տ ն տե ս ու թյ ան
կ ար ն որ ազ ու յ ն մ ա ս ը հ ան դ ի ս աց ող փ ոք բ և մ ի ջ ի ն

ձեռնարկատիրու թյան ոլորտին, ինչն էլ պայմանավորում է թեմայի արդիականությանը և կարևորությանը:

Յետադուռ թյան նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է հետազոտել Հայաստանի Հանրապետությանը մի քանի իրականացվող հարկային բարեփոխումները, գնահատել վերջիններիս ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկությանը և ներքին վրա, ինչպես նաև մշակել և առաջարկել մոտեցումներ և մեխանիզմներ՝ ուղղված ՀՀ ՓՄՁ ոլորտի բարելավմանը, հարկային վարչարարության պարզեցմանը և հարկային մարմնի ու հարկ վճարողների միջև փոխվստահության բարձրացմանը:

Յետադուռ թյան հիմնական նպատակի իրականացման համար առաջարկվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ-ում իրականացված հարկային բարեփոխումների ազդեցությունը ՓՄՁ ոլորտի վրա,
- ուսումնասիրել զարգացած և զարգացող տնտեսական համակարգերում իրականացված հարկային բարեփոխումները,
- վերլուծել ՀՀ ՓՄՁ ոլորտի հարկման համակարգի առկա հիմնախնդիրները,
- վերլուծել ՓՄՁ ոլորտի դերը ՀՀ տնտեսությանում,
- ուսումնասիրությանը և վերլուծությանը հիմնական վրա բացահայտել ՀՀ ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական, տնտեսական և վարչարարական գործոնները,
- վերհանել այն հիմնական մոտեցումները և մեխանիզմները, որոնք թույլ կտան մշակել ՀՀ տնտեսական և իրավական դաշտին համապատասխան, միևնույն ժամանակ, զարգացած և ԵԱՏՄ անդամ երկրներում ՓՄՁ հարկման համակարգում կիրառվող մոտեցումներին համահունչ հարկման վարչարարական մոդել,
- մշակել հարկային բարեփոխումների իրականացման համակարգված և արդյունավետ մեխանիզմներ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ ՓՄՁ ոլորտի հարկային համակարգն է:

Ուսումնասիրության առարկան ՀՀ ՓՄՁ ոլորտի հարկային հիմնախնդիրներն են և դրանց հնարավոր լուծումները:

Ատենախոսության տեսակն, մեթոդաբանական և ստեղծկառվածական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հարկային բարեփոխումների վերաբերյալ դասական և ժամանակակից տնտեսագիտության հիմնարար դրույթները, հայ և օտարերկրյա

տնտեսագետներին ուսումնասիրությանը, վերլուծությանը, հրատարակությանը, հետազոտությանը, արդյունքները, մասնավորապես՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՓՄՁ 2ԱԿ), ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հրատարակված տվյալները, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, ինչպես նաև միջարք ուսումնական հաստատությանը կողմից հրատարակած գեկոյցները և տեղեկությանը, Հայաստանի Հանրապետության հարկային ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, հայեցակարգերը և իրավական ակտերը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությանը և վերլուծությանը հարդյունքում ստացվել են տնտեսական, մեթոդական և կիրառական ուղղվածությանը ուսնեցող միջարք արդյունքներ, որոնց գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ դրույթներում.

- ՀՀ հարկային մարմնի և ՓՄՁ ոլորտի տնտեսավարող ու բյուջեի տնտեսի միջև փոխվստահության, փոխահավերհամագործակցության և փոխարարքերությանը ներկայիս որակապես նոր մոտեցումների ներդրմանն ապաստակով մշակվել է հարկային համակարգի բարեփոխմանն ուղղված համագործակցության վրա հիմնված հարկային կարգապահության մոդելը և վերջինիս ներդրմանը ընթացակարգը,

- վերջին տարիների ՀՀ հարկային համակարգում իրականացված բարեփոխումների բացթողումները շտկելու, թերությանը վերացնելու նպատակով մշակվել է փոփոխությանը կառավարման մոդել, որը հնարավորությանը նկատ ներքին և արտաքին աղբյուրներով պայմանավորված գործունեությանը ազդեցությանը ունեցալ քայլերի տրամաբանական հաջորդականությանը վրա հիմնված բարեփոխումների ներդրման մեխանիզմ,

- բացահայտվել է ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի տնտեսավարող ու բյուջեի տնտեսի դասակարգման տարբերակված մոտեցումների կիրառումը պետական տարբեր կառույցների կողմից, ինչպես նաև համապատասխան օրենքում նշված և փաստացի ցուցանիշների անհամապատասխանությանը, և ներկայացվել է

ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կատարելագործված դասակարգում,

• իրականացված վերլուծության ներքին արդյունքում բացահայտվել և գնահատվել է հարկային օրենսդրական բարեփոխումների ազդեցությունը ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի և պետական բյուջեի հարկային եկամուտների վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը և դրանում կատարված վերլուծության ներքին, ստացված արդյունքներն ու եզրակացությունները կարող են կիրառվել ՀՀ հարկային համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետության բարձրացման ու կատարելագործման, ՓՄՁ ոլորտի զարգացման խթանմանն ուղղված հարկային քաղաքականության մշակման, ինչպես նաև հարկային մարմնի և ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջև փոխադասակարգում ձևավորման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և

հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամում, ինչպես նաև 2013-2014թթ. երիտասարդ գիտնականների միջբուհական գիտաժողովներում:

Ատենախոսության արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված նպատակով և խնդիրներով: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների և առաջարկությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 139 էջից, պարունակում է 19 աղյուսակ, 19 գծապատկեր:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածուն թյունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության առարկան և օբյեկտը, տեսակն, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՓՄՁ ոլորտի հարկային կարգավորման առանձնահատուկ թյուր նկերը» գլխում

ներկայացվել են ՀՀ հարկային համակարգը և ՓՄՁ ոլորտի նկատմամբ կիրառվող հարկային քաղաքականությանը, ՀՀ հարկային բարեփոխումներին արդի ուղղությունները, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի հարկային բարեփոխումներին միջազգային փորձը:

Փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են շուկայական տնտեսության զարգացման կարևորագույն տարրերից, որոնք ապահովում են տնտեսության զբաղվածների մեծ մասը: Այդ պատճառով էլ պետության կողմից մշակվող տնտեսական և ֆինանսական քաղաքականությունն ուղղվում է ՓՄՁ ոլորտի զարգացմանը: Նախորդ տարիներին ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՁ սուբյեկտների քանակական աճի և ռեսուրսների հասանելիության վրա:

Առաջիկա տարիներին ՓՄՁ զարգացման քաղաքականության նպատակը հանդիսանալու է փոքր և միջին բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովելը՝ ձեռնարկությունների զարգացման և ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետերկխոսության մեխանիզմների կատարելագործման միջոցով¹: Այս նպատակի գործարկման տեսանկյունից առանձնապես կարևորվում է հարկային համակարգում նպատակաուղղված բարեփոխումներին իրականացումը:

Հարկային բարեփոխումներն ուսումնասիրվել են օրենսդրական և վարչարարական տեսանկյունից: Իրականացված բարեփոխումներին հիմքում առնալով այն դեր է ունեցել հարկվճարողների սպասարկման որակի բարելավումը և էլեկտրոնային ժամանակակից ծառայություններին ներդրումը, որոնց ուղղությամբ հատկապես վերջին տարիներին միջառք միջոցառումներ են իրականացվել: Այս փոփոխություններն ուղղակիորեն ազդել են տնտեսավարող սուբյեկտների վրա: Բարեփոխումներն ուղղված են եղել երկրում գործարարությանը զբաղվելու համար դյուրին պայմանների ապահովմանը, իսկ բարեփոխումներին համար հիմք է հանդիսացել միջազգային ավագույն փորձը: Ուսումնասիրելով հարկային բարեփոխումները՝ կարող ենք փաստել, որ փոփոխություններին պարբերականությունը բացասաբար է անդրադարձել գործարար

¹ «ՓՄՁ աջակցության ռազմավարություն 2015-2017», Երևան 2014թ., էջ 4

միջավայրի վրա, քանի որ յուրաքանչյուր փոփոխությունը ենթադրում է լրացուցիչ ծախսեր ու որոտում: Բացի այդ, օրենսդրական փոփոխությունները կատարվել են ոչ թե նախապես մշակված և տնտեսության երկարաժամկետ զարգացմանն ուղղված ռազմավարության ներքո, այլ ընդամենը ուղղված են եղել կարճաժամկետ տեղային խնդիրներին և ծմանը:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են ինչպես Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում, այնպես էլ տարածաշրջանային երկրներում իրականացվող հարկային բարեփոխումները, ինչի արդյունքում ներկայացվել են Հայաստանի իրավատնտեսական պայմաններին համահունչ ՓՄՁ ու որտի հարկային բարեփոխմանն ուղղված ամառապարկության ներքո:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ ՓՄՁ ու որտի զարգացումները՝ հարկային բարեփոխումների համառոտում»** գլուխը նվիրված է ՀՀ ՓՄՁ ու որտի նկարագրին, ու որտի հարկային բարեփոխումների ազդեցության վերլուծությանը միջազգային վարկանիշերի համաձայն, ինչպես նաև ու որտում ամրա կա հիմնախնդիրների և բարեփոխումների ամառնահերթ ուղղության ներքի բացահայտմանը:

2015թ. ՀՀ-ում գործունեությանն է իրականացրել 75956 ՓՄՁ սուբյեկտ², ինչը կազմում է ընդհանուր տնտեսական ակտիվ գործունեության իրականացնող տնտեսավարող սուբյեկտների 83%-ը³: 2010-2013թթ. արձանագրվել է տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի շարունակական աճ, մասնավորապես՝ 2010թ. համեմատ 2011թ. աճը կազմել է 15.9%, 2012թ. 2011թ. համեմատ արձանագրվել է 7.6% աճ, իսկ 2013թ. 2012թ. համեմատ աճը կազմել է 2.6%: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չնայած արձանագրված աճին, այդ ժամանակահատվածում աճի տեմպերը կրճատվել են, իսկ 2014թ. 2013թ. համեմատ հարկ վճարողների քանակը նվազել է: Սակայն 2015թ. արձանագրվել է հարկ վճարողների թվաքանակի 2.14% աճ՝ գերազանցելով նաև 2013թ. արձանագրված ցուցանիշը:

ՓՄՁ ու որտի տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը՝ 53.2%-ը, գրանցված են Երևան քաղաքում, 7.4%-ը՝ Կոտայքի մարզում և 6.9%-ը՝ Արմավիրի մարզում: Ամենացածր արդյունք արձանագրվել է Վայոց Ձորի մարզում: Ուստի անհրաժեշտ է ու որտի խթանմանն ուղղված քայլերն ամառնահերթ իրականացնել հենց ցածր արդյունք արձանագրած մարզերում:

² «Վերլուծությանն է ՓՄՁ հարկային դաշտի վերաբերյալ . 2013-2015 համեմատական», ՎԶԲ գործարարության աջակցման գրասենյակ, Երևան 2016թ., էջ 12

³ «Վերլուծությանն է ՓՄՁ հարկային դաշտի վերաբերյալ . 2013-2015 համեմատական», ՎԶԲ գործարարության աջակցման գրասենյակ, Երևան 2016թ., էջ 4

ՀՀ ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտներն ըստ տնտեսության ճյուղերի և ստեղծագծած են խիստ անհավասարաչափ: ՓՄՁ սուբյեկտները գերակշռում են մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում: Այդ ոլորտում ներգրավված է ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր քանակի 58.7%-ը:

Հատկանշական է, որ գրեթե բոլոր ճյուղերում 2010-2013թթ. արձանագրվել է ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի աճ, սակայն 2014թ. 2013թ. համեմատ ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների քանակը կրճատվել է դիտարկված 12 ճյուղերից 5-ում:

Տնտեսավարող սուբյեկտների և վերջիններիս աշխատողների թվաքանակները և շրջանառության ներքին համադրությանը ցույց է տալիս, որ միջինում 1 գերփոքր կազմակերպության տարեկան շրջանառությանը կազմում է 6.2 մլն դրամ, փոքրը՝ 109.3 մլն դրամ, իսկ միջինը՝ 571.3 մլն դրամ (տես՝ ս, աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

*ՓՄՁ ոլորտի մեկ տնտեսավարող սուբյեկտի աշխատողների միջին թվաքանակը և միջին տարեկան շրջանառությանը*⁴

Ցուցանիշ	Տնտեսավարող սուբյեկտներ		
	Գերփոքր	Փոքր	Միջին
Մեկ ՓՄՁ տնտեսավարող սուբյեկտի աշխատողների միջին թվաքանակ			
2010թ.	1.8	20.8	103.1
2011թ.	1.7	20.6	103.1
2012թ.	1.7	20.7	104.3
2013թ.	2	22	104.8
2014թ.	2	22.1	105.3
2015թ.	2	22	106
Մեկ ՓՄՁ տնտեսավարող սուբյեկտի միջին տարեկան շրջանառությանը (մլն դրամ)			
2010թ.	6.4	123	623
2011թ.	6.2	127	609
2012թ.	6	131	696
2013թ.	5.9	100	536
2014թ.	6.1	103	548
2015թ.	6.2	109.3	571.3

⁴ Մանվելյան Մ. ՓՄՁ սուբյեկտների դասակարգման առանձնահատկությունները ՀՀ-ում, ՓՖինանսներ և Էկոնոմիկա հանդես, #7-8 (191-192), 2016թ., էջ 23-24

Ստացված արդյունքների համեմատություները «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով⁵ սահմանված ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հետ տվյալները, որ գերփոքր ձեռնարկության ներքին աշխատողների միջին թվաքանակը 5 անգամ ցածր է օրենքում նշված դասակարգումից, իսկ միջին տարեկան շրջանառություները՝ ավելի քան 16 անգամ: Փոքր ձեռնարկության ներքին ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 2.3 և 4.6, իսկ միջին ձեռնարկության ներքին համար՝ 2.4 և 2.6: Այս ցուցանիշները հիմք են հանդիսացել ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կատարելագործված դասակարգման ներկայացման համար:

Ատենախոսության շրջանակներում դիտարկվել են նաև «Գործարարության բաղադրվելը» գեկույցում ՀՀ զբաղեցրած դիրքի փոփոխության ներքին: Մասնավորապես՝ «Հարկերի վճարումը» ցուցիչը հանդիսանում է իրականացված հարկային բարեփոխումների ազդեցության գնահատման միջոց և հնարավորության է ընծեռում համադրել այլ երկրներում իրականացված հարկային բարեփոխումներն ու դրանց՝ ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործարարության բաղադրվելու պայմանների բարելավմանն ուղղված ազդեցությանը:

Ուսումնասիրվել են նաև ՓՄՁ ոլորտում առկա հիմնախնդիրները: Իրականացվել է ոլորտի SWOT վերլուծության: Փորձ է արվել գնահատել բիզնեսի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները, ինչի արդյունքում որպես հիմնական խոչընդոտ նշվել են հարկային օրենքների ոչ հստակ ձևակերպումները և օրենքների հաճախակի փոփոխության ներքին, առկա կոռուպցիոն ռիսկերը: Այս հիմնախնդիրները հիմք են հանդիսացել ատենախոսության հաջորդ գլխում հարկային բարեփոխումներին ուղղված առաջարկության ներկայացման համար:

Ատենախոսության երրորդ՝ **«ՓՄՁ ոլորտի հարկային միջավայրի բարելավման ուղիները»** գլխում ուսումնասիրվել է ՓՄՁ ոլորտի հարկային բարեփոխումների ազդեցությանը պետական բյուջեի հարկային եկամուտների վրա, ներկայացվել է ՀՀ հարկային համակարգում փոփոխության ներքին կառավարման մոդելը: Որպես ՓՄՁ ոլորտի հարկային բարեփոխման նորարարական մոտեցում ներկայացվել է համագործակցության վրա հիմնված հարկային կարգապահության մոդելը և վերջինիս

⁵ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական քաղաքականության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-121, 05.12.2000թ.

ներդրման ընթացակարգը, իսկ հարկային բարեփոխումների զարգացման միտումների համատեքստում ուսու մնասիրվել են հարկային օրենսգրքով նախատեսվող փոփոխությունները:

Աշխատանքի շրջանակներում դիտարկված հարկային փոփոխություններին ազդեցությունները գնահատելու համար վերլուծվել է ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի կազմն ու կառուցվածքը: 2015թ. ընթացքում ՓՄՁ ոլորտի հարկ վճարողների կողմից իրականացված հարկային մուտքերը կազմել են 275.5 մլրդ դրամ⁶ նախորդ տարվա համեմատ արձանագրելով 15.9% աճ: Տնտեսավարող սուբյեկտների ամսն ձին խմբերի հարկային մուտքերի վերլուծությանը ցույց է տալիս, որ ՓՄՁ ոլորտի մուտքերի 24.4%-ն ապահովում են գերփոքր տնտեսավարող սուբյեկտները, իսկ փոքր և միջին սուբյեկտների հարկային մուտքերը գրեթե նույնն են, համապատասխանաբար՝ 36.7% և 38.9%:

Աղյուսակ 2.

ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերի մասնաբաժինը պետական բյուջեի հարկային եկամուտներում 2010-2014թթ. (մլրդ դրամ)⁷

	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Պետական բյուջեի հարկային եկամուտներ ⁸	699,4	777,4	878,4	1000,9	1064,1	1067.9
ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված հարկեր	197,8	211,1	234,9	232,2	237,7	275.5
ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը պետական բյուջեի հարկային եկամուտներում	28%	27%	27%	23%	22%	25.8%

Հաշվարկվել է նաև ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացված հարկային վճարումների

⁶ «Վերլուծություններ ՓՄՁ հարկային դաշտի վերաբերյալ. 2013-2015 համեմատական», ՎՉԵԲ գործարարության քաղաքական գրասենյակ, Երևան 2016թ., էջ 12

⁷ «Փոքր և միջին ձեռնարկատիրություն ան զարգացման 2016-2018թթ.

նազմավարություններ», Հավելված 1, Աղյուսակ 4, էջ 24

⁸ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների տարեկան հաշվետվություններ, 2014թ., ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություններ 2009-2012թթ.

տեսակարար կշիռն ընդհանուր հարկային մուտքերում, որը 2015թ. կազմել է 25.8% (տե'ս, աղյուսակ 2): Այս ցուցանիշը փաստում է, որ հարկային բեռի գերակշիռ մասը կրում են խոշոր տնտեսավարող սուբյեկտները: Սակայն հարկ է նշել, որ 2015թ. նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների 3.8 մլրդ դրամով աճն ապահովվել է ՓՄՁ տնտեսավարող սուբյեկտների կողմից: Վերջիններս արձանագրել են հարկային եկամուտների 37.8 մլրդ դրամ աճ, մինչդեռ խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված հարկերը նվազել են:


Վերլուծվել են նաև ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող առանձին հարկատեսակների գծով հարկային մուտքերը⁹, որոնք 2014-2015 թվականներին նվազել են և ներկայումս գիջում են անգամ 2007 թվականի հարկային մուտքերին: Նվազումը հիմնականում պայմանավորված է շրջանառության հարկի և հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակներից ստացվող հարկային մուտքերի կրճատմամբ:

Ատենախոսության շրջանակներում իրականացված հարկային բարեփոխումների ուսումնասիրությանը փաստում է, որ այդ բարեփոխումները սովորաբար կրել են տարերային բնույթ, պայմանավորված են եղել պահի հրամայականով և շատ հաճախ հանդիպել են ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների դիմադրությանը: Ելնելով ստացված արդյունքներից և կարևորելով բարեփոխումների դերը հարկային համակարգի զարգացման գործում՝ մշակվել է ՀՀ հարկային համակարգում փոփոխության ներդրող կառավարման մոդել¹⁰ (տե'ս, գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ՀՀ հարկային մարմնում իրականացվող փոփոխության ներդրող կառավարման մոդել

⁹ ՀՀ հարկային և մաքսային մարմինների տարեկան հաշվետվությանը, 2014թ., ՀՀ ԿԱՊԵԿ տարեկան հաշվետվությանը, 2009-2012թթ.

¹⁰ Մանվելյան Մ. Փոփոխության ներդրող կառավարումը ՀՀ հարկային համակարգում, Ֆինանսների և Եկոնոմիկա հանդես, # 11-12 (183-184), 2015թ., էջ 6-7




Հարկային մարմին - հարկ վճարողներ

հարաբերության ներքին որակապես նոր մակարդակի ապահովման նպատակով մշակվել է համադործակցության վրա հիմնված հարկային կարգապահության մոդելը և վերջինիս ներդրման ընթացակարգը¹¹ (տե՛ս, գծապատկեր 2): Այն ենթադրում է հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կամավորության սկզբունքով և փոխամադործակցության նպատակով կնքված համաձայնագրի հիման վրա հարկային մարմնի կողմից իրականացվող ընթացիկ հսկողության և հարկային մարմնի կողմից հարկ վճարողին լրացուցիչ ծառայության ներքին մատուցում:

Գծապատկեր 2. Համադործակցության վրա հիմնված հարկային կարգապահության մոդել

¹¹ Մանվելյան Մ. ՔՀամադործակցության վրա հիմնված հարկային կարգապահության համակարգը՝ որպես ՓՄՁ ոլորտի քարտեզագրման արդյունքի իրականացման նորարարական մոտեցում, Ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, # 11-12 (183-184), 2015թ., էջ 7-9



որտեղ՝

- 1 – հարկային և ֆինանսական հաշվետվությունները ներդրում են համար տեղեկություններում և ներդրում են տրամադրում հարկային ծառայությունները և ներդրում են մատուցողներին,
- 2 – հարկային և ֆինանսական հաշվետվությունները ներդրում են հարկային տեսչության հաշվարկային հաշվարկային տեսչության և վերլուծության բաժնի համաձայնեցման,
- 3 – նախնական հարկային հաշվարկներին ներկայացնում հարկային տեսչության և վերլուծության բաժնի համաձայնեցման,
- 4 – խորհրդատվություն տրամադրում հաշվարկներին ճշգրտման նպատակով,
- 5 – տնտեսավարող և բյուջետային հաշվապահական ծրագրերի հասանելիությունը հարկային մարմիններին իրականացնում,
- 6 – պարզաբանման կարիքները հարցերի քննարկում,
- 7 – պարզաբանումներին տրամադրում,
- 8 – հարկային օրենսդրությանը և վարչարարությանը վերաբերող անհիշատակ հարցերի պարզաբանում:

Մոդելի կիրառության արդյունքում հարկ վճարողի կողմից իրականացվող գործարքներին և հաշվառման տվյալներին նկատմամբ հարկային մարմնի կողմից կիրականացվող ընթացիկ հսկողությունը, արդեն կատարված կամ նախատեսվող գործարքներին մասով հարկ վճարողներին կտրամադրվեն ծագած

հարցերի պարզաբանումներ, կկրճատվի հարկային ստուգումներին քանակը:

Որպես հարկային բարեփոխումներին գերակա ուղղությամբ ունենալու սուբմասշիվել են նաև նախագծային փուլում գտնվող հարկային օրենսգրքով նախատեսվող փոփոխությունները: Նշենք, որ նախատեսվող հարկային բարեփոխումը՝ ուղղված հարկային օրենսգրքի ներդրմանը, ընդհանուր առմամբ իր դրական ազդեցությունը կունենա ՓՄՁ ոլորտի վրա: Սակայն անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին, հասարակական և միջազգային կազմակերպություններին հետևել խնդրահարույց դրույթների կատարելագործման նպատակով: Համատեղ քննարկումներին արդյունքում կբարձրանա նախատեսվող փոփոխություններին արդյունավետությունը, և վերջինիս կիրառությունը կդառնա առավել դյուրին հարկվածարողների համար:

Եզրակացություններ և առաքարկություններ բաժնում

առնվազնային շրջանակներում դրված խնդիրներին և նպատակներին համապատասխան կատարված դիտարկումներին և հետազոտություններին արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի վրա հարկային բարեփոխումներին ազդեցություն գնահատականները վկայում են, որ այս համակարգը դեռևս զարգացած է ՀՀ-ում, ազդեցություն գնահատականները չեն կրում պարբերական բնույթ կամ հարցումները կատարվում են միայն հարկային համակարգի վերաբերյալ, այլ ոչ կոնկրետ բարեփոխման կամ հարկատեսակի մասով, իսկ օրենսդրական նախագծերին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից տրված եզրակացությունում նշվում է միայն դրա դրական կամ բացասական ազդեցությունը գործարար միջավայրի վրա և հարկային բոլոր սուբյեկտներին արձագանքը համարվում է միատեսակ,

2. Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային բարեփոխումներին արդյունքում տարեցտարի ավելանում են օրենսդրական փոփոխությունները, որոնք Էլրացուցիչ պահանջներ են դնում գործարարների առջև: Միաժամանակ, կատարվող փոփոխություններին պարբերականությունը բացասաբար է անդրադառնում գործարար միջավայրի վրա, քանի որ յուրաքանչյուր փոփոխություն ենթադրում է ծախսեր ոլորտում իրականացված փոփոխություններին ծանոթանալու համար, ինչպես նաև նվազեցնում է հարկային դաշտի կանխատեսելիությունը,

3. «Ծրջանառություն հարկի մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների շուրջ ծավալված իրադարձությունների վերաբերյալ, որ շատ դեպքերում տարբեր հարկային փոփոխությունների մասով ցածր է տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածությունը: Մասնավորապես, հասարակության շրջանում օրենքների նախագծերի վերաբերյալ տարածվում են կամ սխալ մեկնաբանություններ, կամ նախագծի վերաբերյալ տեղեկանում են միայն նախագծի ընդունումից հետո,

4. իրականացված հարկային բարեփոխումները սովորապես կրել են տարերային բնույթ, պայմանավորված են եղել պահի հրամայականով և շատ հաճախ հանդիպել են հասարակության, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների դիմադրությունը,

5. իրականացված հարկային բարեփոխումների արդյունքում ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը պետական բյուջեի հարկային եկամուտներում 2015թ. կազմել է 25.8%՝ փաստելով, որ հարկային բեռը հիմնականում իրենց վրա են կրում խոշոր տնտեսավարող սուբյեկտները:

Վերոնշյալ եզրակացությունները հիմք են հանդիսացել հետևյալ առաջարկությունների համար.

1. «Գործարարությունը զբաղվելը» գեկույցներում Հայաստանի վարկանիշի բարելավման, ինչպես նաև հարկատուների համար հարկային վարչարարական բեռի նվազեցման նպատակով առաջարկվում է «Ծրջանառություն հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկի հաշվետու ժամանակաշրջան եռամսյակի փոխարեն սահմանել կիսամյակը, քանի որ հարկային եկամուտներում բացառապես ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող շրջանառություն հարկը կազմում է 1.1%, իսկ այն պետական բյուջեի տեսանկյունից մեծ մուտքեր չի ենթադրում, ուստի կիսամյակային վճարումներով նույնպես հնարավորություն կլինի ապահովել բյուջեի ծախսերը,

2. հաշվի առնելով հարկային բարեփոխումների ազդեցությունը գնահատման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք յուրաքանչյուր նախագծի համար տրված ազդեցություն գնահատականների համար սահմանել նոր նախապայմաններ և տալ առավել հիմնավորված գնահատական: Միաժամանակ, առաջարկում ենք հարկային բարեփոխման ազդեցություն գնահատական տալ նաև օրենքն ու ժի

մեջ մտնելուց 1 տարի հետո՝ նախագծի արդյունավետության գնահատման նպատակով,

3. առավել կանխատեսելի հարկային դաշտ ձևավորելու նպատակով կարծում ենք անհրաժեշտ է կրճատել հարկային օրենքներում կատարված փոփոխության նկատմամբ պարբերականությանը և դրանց ուժի մեջ մտնելու համար սահմանել առավել երկար ժամանակահատված,

4. հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև թյուրլուծման մեթոդից խուսափելու համար, բացի ինտերնետ հարթակում քննարկումներից, առաջարկվում է քննարկումներ կազմակերպել նաև այլ հարթակներում, որտեղ ներկա կլինեն ինչպես տարբեր կազմակերպության ներկայացուցիչներ, այնպես էլ ՀՀ կառավարության ներկայացուցիչներ: Սա հնարավորություն կտա բարելավել ոչ միայն հասարակության իրազեկվածությունը, այլև լսել նոր առաջարկներ և ներառել նախագծերում,

5. «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի և «Հաստատարված վճարների մասին» ՀՀ օրենքի սկզբունքների նմանության նից ելնելով, ինչպես նաև հաստատարված վճարների համակարգ կիրառող գործուներության տեսակների սակավության մեջ պայմանավորված՝ նպատակահարմար կլինի սահմանել մեկ միասնական վճար՝ արտոնագրային վճար, ինչը կպարզեցնի հարկային օրենսդրությանը և կնպաստի «Գործարարության մեջ զբաղվելը» գեկոյցում ՀՀ դիրքերի բարելավմանը,

6. ՀՀ-ում արտոնագրային վճարները կատարվում են արտոնագիրը ստանալիս, ինչը լրացուցիչ հարկային բեռ է հանդիսանում հարկ վճարողների համար: Հատկապես կարևորում ենք նորաստեղծ հարկ վճարողների համար նման վճարումների բացասական հետևանքները, քանի որ, վերջիններիս, նախքան եկամուտ ստանալը, ստիպված են վճարումներ կատարել: Այս առումով առաջարկում ենք կիրառել ՌԴ օրինակը՝ 6 ամսից մինչև 1 տարի ժամանակահատվածով ձեռքբերված արտոնագրերի գումարի 1/3-ը վճարել արտոնագրի գործուներության մեջ մտնելուց հետո ոչ ուշ 25 օրացուցային օրվա ընթացքում, իսկ 2/3-ը՝ ոչ ուշ, քան արտոնագրի գործուներության դադարումից 30 օր առաջ,

7. Հաշվի առնելով վերլուծության արդյունքում ստացված փաստացի արդյունքները՝ կարծում ենք ՓՄՁ դասակարգման չափորոշիչները կատարելագործման կարիք ունեն: Մասնավորապես՝ առաջարկվում է ՀՀ-ում կիրառել ՓՄՁ ոլորտի տնտեսավարող ու բյուջետների հետևյալ դասակարգումը.

1) գերփոքր՝ առևտրային կազմակերպության ներևանհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 5 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեության նից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 50 մլն դրամը,

2) փոքր՝ առևտրային կազմակերպության ներևանհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 25 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեության նից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 250 մլն դրամը,

3) միջին՝ առևտրային կազմակերպության ներևանհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 125 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեության նից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 750 մլն դրամը և 500 մլն դրամը,

8. Հարկային մարմնի և ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների միջև փոխվտահության, փոխահալետ համագործակցության և փոխարարերության ներտակապետ նոր մտեցումների ներդրումն նպատակով մշակվել է համագործակցության վրա հիմնված հարկային կարգապահության մոդելը, որը թույլ կտա ապահովել երկարաժամկետ կայունության, հարկ վճարողների շրջանում արմատավորել ինքնազնահատման համակարգը, կրճատել հարկային մարմնի համար լրացուցիչ ֆինանսական ծախս հանդիսացող, ինչպես նաև հարկ վճարողների կողմից որպես լրացուցիչ ժամանակի և ռեսուրսների ծախս նախանշվող հարկային ստուգումների քանակը և էապետ կրճատել ճշգրտվող հարկային հաշվետվության ներտի թվաքանակը,

9. վերջին տարիների ՀՀ հարկային համակարգում իրականացված բարեփոխումների բացթողումները շտկելու, թերության ներտը վերացնելու համար առաջարկում է հարկային համակարգում փոփոխության ներտն իրականացնել փոփոխության ներտի կառավարման մոդելի կիրառմամբ, որը հնարավորության կտա ներտին և արտաքին աղբյուրներից ստացված վերտուծության արդյունքում ունենալ քայլերի տրամաբանական հաջորդականության վրա հիմնված բարեփոխումների ներտրման մեխանիզմ:

Ատենախոսության մեջ ներկայացված հետազոտության արդյունքների կիրառումը հնարավորության կտա ՀՀ ՓՄՁ

ոլ որտի հարկման դաշտում ձևավորել նոր հարկային մշակույթ, ինչպես նաև բարձրացնել հարկ վճարողներ-հարկային մարմին շփումներին մակարդակը:

Առենախոսություն հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Բաղդասարյան Գ., Մանվելյան Մ. «ՓՄՁ ոլորտի հարկման առանձնահատկությունները ԵՄ անդամ երկրներում», «Ֆինանսներ և Էկոնոմիկա» հանդես, #5-6 (177-178), 2015թ., էջ 92-94
2. Մանվելյան Մ. «Փոքր և միջին ձեռնարկատիրություն հարկման ռեժիմները Ռուսաստանի Դաշնությունում», «Եվրոպական ակադեմիա» գիտական հոդվածների ժողովածու 6, Երևան, 2015թ., էջ 19-27
3. Մանվելյան Մ., Յարոյան Զ. «Փոքր և միջին ձեռնարկատիրություն ոլորտի զարգացման դինամիկան Յայաստանի Յանրապետությունում», «Այլընտրանք» գիտական հանդես, #4, 2015թ., էջ 66-75
4. Մանվելյան Մ. «ՓՄՁ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված հարկերի դինամիկան Յայաստանի Յանրապետությունում», «Այլընտրանք» գիտական հանդես, #4, 2015թ., էջ 108-116
5. Մանվելյան Մ. Փոփոխություններին կառավարումը ՀՀ հարկային համակարգում, Ֆինանսներ և Էկոնոմիկա հանդես, #11-12 (183-184), 2015թ., էջ 6-7
6. Մանվելյան Մ. Համագործակցություն վրա հիմնված հարկային կարգապահություն համակարգը` որպես ՓՄՁ ոլորտի բարեփոխումների իրականացման նորարարական մոտեցում, Ֆինանսներ և Էկոնոմիկա հանդես, #11-12 (183-184), 2015թ., էջ 7-9
7. Մանվելյան Մ. ՓՄՁ սուբյեկտների դասակարգման առանձնահատկությունները ՀՀ-ում, Ֆինանսներ և Էկոնոմիկա հանդես, #7-8 (191-192), 2016թ., էջ 23-24

ВЛИЯНИЕ НАЛОГОВЫХ РЕФОРМ РА НА СЕКТОР МАЛОГО И СРЕДНЕГО
ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита состоится 10-ого ноября 2016 года в 16:00 часов, на заседании специализированного совета 060 ВАК РА по экономике при Европейской региональной образовательной академии, по адресу 0037, Ереван, ул. Давида Анахта 10.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования. Основной целью диссертации является исследование проводимых в РА налоговых реформ, оценка их влияния на предприятия малого и среднего бизнеса, а также разработка и предложение механизмов и подходов по улучшению сектора МСП, упрощению налогового администрирования и повышению взаимного доверия между налоговыми органами и налогоплательщиками. Для достижения этой цели в работе были поставлены следующие задачи:

- анализ и оценка влияния проводимых в РА налоговых реформ на сектор МСП,
- изучение проведенных налоговых реформ в развитых и развивающихся экономических системах,
- анализ существующих проблем в системе налогообложения сектора МСП в РА,
- анализ и оценка роли малого и среднего предпринимательства в экономике РА,
- выявление правовых, экономических и административных факторов, препятствующих развитию сектора МСП в РА, на основании проведенных исследований и анализов,
- раскрытие основных подходов и механизмов, позволяющих разработать модель налогового администрирования в соответствии с применяемыми подходами в системах налогообложения в развитых странах и странах-членах Евразийского экономического союза, одновременно, соответствующие правовому и экономическому полю РА,
- разработка системных и эффективных механизмов для осуществления налоговых реформ.

Объект и предмет исследования. Объектом исследования является налоговая система сектора МСП, а предметом – налоговые проблемы сектора МСП и их возможные решения.

Основные научные результаты и новизна исследования. На основе проведенных в рамках диссертационного исследования и анализов получен ряд результатов теоретического, методического и практического значения, научная новизна которых проявляется в следующих тезисах:

- для внедрения качественно новых подходов во взаимоотношения налоговых органов РА и субъектов малого и среднего предпринимательства на основе взаимного доверия и взаимовыгодного сотрудничества, разработана модель налоговой дисциплинарности на основе сотрудничества и процедура внедрения последней, направленная на реформирование налоговой системы;
- для исправления упущений и устранения недостатков в проведенных в последние годы в РА налоговых реформах, разработана модель управления изменениями, которая позволит на основе внешних и внутренних источников влияния, иметь основанный на логической последовательности шагов механизм внедрения реформ;
- раскрыты дифференцированные подходы в классификации субъектов малого и среднего предпринимательства разными государственными органами, а также несоответствия закона и фактических показателей, и предложена улучшенная классификация субъектов МСП;
- в результате анализа выявлено и оценено воздействие налоговых законодательных реформ на налоговое бремя и налоговые поступления хозяйствующих субъектов МСП.

THE IMPACT OF RA TAX REFORMS ON THE SPHERE OF SMALL AND
MEDIUM-SIZED ENTERPRENEURSHIP

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – “Economics, Management of Economy and its Spheres”.

The defense of the thesis will take place on November 10, 2016 at 16:00 at 060 Council in Economics of Supreme Certifying Commission of the Republic of Armenia at the European Regional Educational Academy: 10 Davit Anghaght street, Yerevan 0037.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The main purpose of the dissertation is to research tax reforms in RA with the aim to assess their impact on small and medium-sized enterprises, to develop and propose mechanisms and approaches for the improvement of SME sector through the simplification of tax administration and the increase of mutual trust between tax authorities and taxpayers. In order to meet the aforementioned goal, the following objectives are set:

- to analyze the impact of tax reforms on SME sector in the Republic of Armenia,
- to study tax reforms in both developed and developing economies,
- to study the problems of SME taxation,
- to analyze the role of small and medium enterprises in Armenia's economy,
- on the basis of research and analysis, to reveal legal, economic and administrative factors hindering the development of SME sector,
- to identify the main approaches and mechanisms which will enable to present a new tax administrative model for SME sector in terms of the latter's implementation within the RA economic and legal environment, as well as, the relevance with the small and medium enterprises taxation approaches exercised in the developed countries and the member countries of the Eurasian Economic Union,
- to develop systemized and efficient mechanisms for the implementation of tax reforms.

The Object and the Subject of the Research: The object of the dissertation is the taxation system of SME sector; and the subject is the taxation problems of SME sector and their possible solutions.

The Main Scientific Results of the Research and the Novelty: Based on the results of the study and analysis of the research, the following results of theoretical and practical applications are considered scientific novelty:

- to implement a new approach in the relations between the RA tax authorities and small and medium-sized enterprises based on the principles of mutual trust and mutually beneficial cooperation, Cooperative compliance model and procedure for the latter's implementation was developed;
- with the aim to correct loopholes and deficiencies of tax reforms conducted in recent years, Change Management model is developed, which will ensure the mechanisms for implementing tax reforms based on logical sequence of steps taking into consideration the influence of factors conditioned with the external and internal sources;
- the differentiated approaches for the classification of small and medium enterprises used by different governmental bodies were revealed, as well as inconsistencies were disclosed between the applicable law and the actual numbers, and an improved classification of SMEs was proposed;
- in the results of conducted analysis, the impact of the tax legislative reforms on SMEs' tax burden and state budget tax revenues were emphasized and evaluated.